Արձանագրություն թիվ 2

<<ՀԱԷԿ-ՊԸԾՁԲ-7/15>> ծածկագրով կայանի 2015թ. Ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտի ծառայությունների գնման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Մեծամոր

18 հունվարի 2016թ.
ժամը.12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ Ա. Սարգսյանը,

Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Ամիրաղյանը, Գ. Մարգարյանը,

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Զեյնալյանը,

<<Ասատրյանս>> ՍՊԸ տնօրեն Ս.Ասատրյանը, <<Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ>> ՍՊԸ ներկայացուցիչ Վ.Պետրոսյանը, <<Աուդիտ Սերվիս>> ՍՊԸ նեկայացուցիչ Դ.Աբրահամյանը:

<<ՀԱԷԿ-ՊԸԾՁԲ-7/15>> ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման մասին

1.Հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց կայանի 2015թ. Ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտի ծառայությունների գնման ընդհանուր (նախահաշվային) գինը՝ մեկ թվով արտահայտված՝ 5000000 ՀՀ դրամ:

Գնահատող հանձնաժողովի քարտուղար Գ.Զեյնալյանը տեղեկատվություն հաղորդեց գրանցամատյանում կատարված գրառումների մասին և հանձնաժողովի նախագահին փոխանցեց հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը:

Ընդունվեց ի գիտություն, որ ընթացակարգին մասնակցության հայտեր են ներկայացրել հետևյալ անձիք.

2. <<Ասատրյանս>> ՍՊԸ- ք. Երևան, Արամի 64, Բուլվար-Պլազա Բիզնես կենտրոն, 2-րդ հարկ , հեռ 010-530-727, 099-543388:

3. <<Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ>> ՍՊԸ- ք. Երևան, Նուբարաշեն 10փ. 6 տուն, հեռ.010-572842

4. <<Աուդիտ Սերվիս>> ՍՊԸ- ք. Երևան, Մ.Խորենացի 47/7, բն. 46 հեռ. 010-577-544:

5. Հայտեր ներկայացրած մասնակիցների ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերով սահմանված կարգին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ –3, դեմ – 0:

6. Մասնակիցների հայտերում ներառված փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ –3, դեմ – 0:

Հանձնաժողովի նախագահը հրապարակեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված հիմք ընդունելով տառերով գրվածը՝

Հ/Բ	Գնման առարկայի անվանումը	<<Ասատրյանս>> ՍՊԸ	<<Աուդիտ Սերվիս>> ՍՊԸ	<<Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ>> ՍՊԸ
1	2015թ. Ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտի ծառայություններ	2268000 (երկու միլիոն երկու հարյուր վաթսունութ հազար) /ներառյալ ԱԱՀ/	4500000 (չորս միլիոն հինգ հարյուր հազար) /ներառյալ ԱԱՀ/	1782000 (մեկ միլիոն յոթ հարյուր ութսուներկու հազար) /ներառյալ ԱԱՀ/

9. Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, հանձնաժողովը որոշեց՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից

1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝

<<Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ>> ՍՊԸ -ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:

2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝

<<Ասատրյանս>> ՍՊԸ -ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:

3-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝

<<Աուդիտ Սերվիս>> ՍՊԸ -ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:

10. Հանձնաժողովի քարտուղարին՝ կատարել հարցում ֆինանսների նախարարություն 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցների կողմից հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

11. Առաջարկել առաջին տեղը զբաղեցրած մասնակից <<Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ>> ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

11. Հիմք ընդունելով << Կառավարության 10.02.11թ. թիվ 168-Ն որոշման 47 կետի 3-րդ ենթակետը, առաջարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակից <<Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ>> ՍՊԸ-ին, երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ, քանի որ նրա կողմից ներկայացված գնային առաջարկը չհիմնավորված ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Լ. Սարգսյան

Անդամներ՝ _____ Հ. Ամիրաղյան

_____ Գ. Մարգարյան

Քարտուղար՝ _____ Գ. Զեյնալյան